ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԴՈՐԱ ՍԱԳԱՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՁՆԻՒ ԴՈՐԱ ՍԱԳԱՅԱՆ, ՈՐ Ի ՄՈՆԹՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Սիրելի Տիկին Սագայան,

Ուրախութիւն ունենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնը յղելու Ձեզ եւ գնահատանքի Մեր խօսքը բերելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր ու փաղանդաշատ զաւակիդ:

Մեծ է ու գնահատելի Ձեր գիտական վաստակն ու մանկավարժական գործունէութիւնը: Լեզուաբանութեան ասպարէզում Ձեր անդուլ ու անյոգնաբեկ ջանքերը առատ պտուղներ են պարգեւել շնորհաշատ հայուհուդ եւ մեծ ճանաչում բերել ինչպէս Մայր Հայրենիքում, այնպէս եւ նրա սահմաններից դուրս:

Տարիներ շարունակ Դուք նուիրուել էք մանկավարժական առաքելութեանը՝ դասաւանդելով եւ պատասխանատու պաշտօններ վարելով Երեւանի Պետական Համալսարանում: Ուրախ ենք, որ, հաստատուելով Կանադայում, Դուք նոյն յաջողութեամբ շարունակում էք գիտական եւ մանկավարժական գործունէութիւնը՝ պեղելով ճանաչողութեան նորանոր ակունքներ եւ Ձեր գիտելիքները առատօրէն բաշխելով երիտասարդ սերնդին Կանադայի կրթական հաստատութիւններում: Ձեր հեղինակութեամբ այսօր ընթերցողի սեղանին են լեզուագիտական բազմահատոր ուսումնասիրութիւններ, գիտական ամսագրերում հրապարակուած մեծաթիւ յոդուածներ ու թարգմանութիւններ, եւ Ձեր վաստակը բարձրօրէն գնահատուած է բազմաթիւ միջազգային պարգեւներով, գիտական կոչումներով ու շքանշաններով:

Մենք առիթ ենք ունեցել ճանաչել Ձեզ եւ տեղեակ ենք նաեւ Մայր Հայրենիքի, հարազատ ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ Ձեր անմնացորդ սիրուն ու նուիրումին: Գոհունակութիւն է Մեզ համար, որ Դուք գործուն մասնակցութիւն էք բերում Տիրախնամ թեմի ազգային եւ եկեղեցական կեանքին՝ արժանանալով բարեխնամ Առաջնորդի եւ հաւատաւոր հայորդեաց սիրուն ու խորին յարգանքին:

Առ ի գնահատութիւն տարիների Ձեր վաստակեալ գործունէութեան, սիրով ընդառաջում ենք Կանադայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստան-

եանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք, որ Բարձրեալ Տէրը մեր մեծ ուսուցչապետերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի անդադար բարեխօսութեամբ ապրուածային Իր շնորհն ու օրհնութիւնը անպակաս դարձնի Ձեր յարկից ներս եւ պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, նոր եռանդով ու ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Յուլիսի
Յամի Տեառն 2005 եւ ի թուին Հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 309